Անահիտ Գագիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ստորև նշված ոսկյա իրերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

2026-11-12 16:37:02

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

Անահիտ Գագիկի Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Ալբերտ Կարապետյանի կողմից 30.11.2026 թվականին ժամը 15։00-ին ք. Երևան, Եկմալյան 6, 4-րդ հարկ, թիվ 45 տարածք հասցեում կանցկացվի ՀՀ սնանկության դատարանի թիվ ՍնԴ/1471/04/24 սնանկության գործով 03.06.2024 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված Անահիտ Գագիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ստորև նշված ոսկյա իրերի հրապարակային սակարկություններով վաճառքը.

ԼՈՏ 1 - Օղեր, 2 հատ, 1 գրամ ընդհանուր քաշով, 580 հարգի, մեկնարկային գինը՝ 27,636 (քսանյոթ հազար վեց հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ,
ԼՈՏ 2 - Թևնոց, 1 հատ, 2,4 գրամ ընդհանուր քաշով, 580 հարգի, մեկնարկային գինը՝ 66,324 (վաթսունվեց հազար երեք հարյուր քսանչորս) ՀՀ դրամ,
ԼՈՏ 3 - Շղթա կախազարդով, 1 հատ, 2,3 գրամ ընդհանուր քաշով, 500 հարգի, մեկնարկային գինը՝ 54,481 (հիսունչորս հազար չորս հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ։

Ոսկյա իրերը գրավադրված են «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ-ում Անահիտ Գագիկի Հակոբյանի պարտավորությունների համար։

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
ա/ լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով.
բ/ իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
գ) անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ նաև պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
դ) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների

դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
ե/ աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը)։

Աճուրդում ներկայացված գույքի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումները։
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո, բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ։
Աճուրդի վերաբերյալ ծանուցումներն իրականացվելու են հայտում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով։
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար և նախավճար, որոնք կազմում են լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել, քան 300,000 ՀՀ դրամը) և 5 տոկոսները։
Մասնակցության վճարը և նախավճարը ենթակա են վճարման Անահիտ Գագիկի Հակոբյանի սնանկության գործով թիվ 1150016558248258 «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչև աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը։
Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել և/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս, քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով։
Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետևաբար, աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը։
Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում՝ սնանկության հատուկ հաշվին՝ լոտի գնման գնից հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը։
Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու և պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից։
Աճուրդի անցկացման հարցերի, լոտի ծանոթացման և ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ալբերտ Կարապետյանին (էլ. փոստ՝ albertkarapetyan013@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11։00-16։00-ն ընկած ժամանակահատվածում։

37441459995
albertkarapetyan013@gmail.com
ք. Երևան, Եկմալյան 6, 4-րդ հարկ